

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2011Թ-ԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2011թ-ին, ի թիվս հորեյրանական մի շարք իրադարձությունների և տոների, նշեցինք Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակը: Մեկուկես տասնամյակի ընթացքում, օրենսդրական բարեփոխումներից սկսած մինչև տեղական իշխանությունների իրավասությունների հստակեցում և լիազորությունների սահմանում, այս համակարգը՝ որպես ժողովրդավարության կարևորագույն ինստիտուտներից մեկը, կայացավ անհրաժեշտ գործառույթների իրականացմամբ և սեփական պատասխանատվության շրջանակներում նպաստում է համայնքային կյանքի կազմակերպմանն ու բնականոն գործունեությանը:

Բնականոն գործունեության բաղկացուցիչ մաս է նաև բնակիչների և շահագրգիռ անձանց առջև հաշվետվությամբ հանդես գալը, որը և ՏԻՄ օրենքի պահանջ է, և բնակիչ-համայնք կապի, տեղական իշխանությունների գործունեության հրապարակայնության լավագույն միջոց:

Նախորդ տարում էլ, աշխատանքները կազմակերպելով Համայնքի զարգացման քառամյա ծրագրի շրջանակներում, հիմք ընդունելով իմ Նախընտրական ծրագրի օրակարգային դրույթները, հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները և բյուջետային հնարավորությունները, կազմակերպվել են 2011թ.-ի աշխատանքները:

Համայնքային կյանքի համաչափ ռիթմը ապահովելու առաջնահերթություններից է համայնքի ֆինանսական կարևորագույն փաստաթղթի ձևավորումը, բյուջեի արդյունավետ օգտագործումը, եկամուտների աճի ապահովումը հնարավոր միջոցների ու լծակների օգտագործման շնորհիվ: Դեռևս 2011թ-ի տարեսկզբին ընդունված բյուջեն, որը իրատեսական էր և հիմնավորված, հնարավորություն ընձեռեց աշխատանքները կազմակերպելու նախանշված պլանի համաձայն:

Արձանագրեմ, որ համայնքի 2011թ. բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 91.5%-ով, որը ես համարում եմ հետևողական աշխատանքի արդյունք:

Կատարողականը ներկայացնեմ՝ ըստ արձանագրված ցուցանիշների:

431.9մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրված և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 395.2մլն. դրամ, թերակատարումը կազմել է 36.7մլն. դրամ, վարչական բյուջեի գծով՝ 2.5մլն. դրամ, ֆոնդային բյուջեի մասով՝ 34.2մլն. դրամ:

2010թ-ի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ համայնքի բյուջեն գերակատարվել է 3.6%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 13.8մլն. դրամ:

2011թ-ի տարեկան բյուջեի վարչական մասը կատարվել է 99.3%-ով. պլանային 388.9մլն. դրամի դիմաց փաստացի ունենք 386.4մլն. դրամ: 2010թ-ի համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 22.6 մլն. դրամ:

Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 97.8%-ով: 2010-ի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 25.5%-ով, կան սեփական եկամուտների հավաքագրումը ավելացել է 23.8մլն. դրամով: Սեփական եկամուտների թերակատարումը պայմանավորված է շենք-շինությունների, փոխադրամիջոցների գույքահարկերի / չի հավաքագրվել 11.0մլն. դրամ / և տեղական տուրքերի / չի հավաքագրվել այդ գծով 1.1 մլն. դրամ / թերակատարմամբ:

Համայնքի ֆոնդային բյուջեն կատարվել է 20.4%-ով / ճշտված պլան՝ 43.0մլն. դրամ, փաստացի՝ 8.8մլն. դրամ /: 2010թ-ի համեմատ ֆոնդային բյուջեի եկամուտները պակասել են 8.8 մլն. դրամով կամ 50.1%-ով:

Վարչական բյուջեի թերակատարումը պայմանավորված է սեփական եկամուտների թերակատարմամբ, իսկ ֆոնդային բյուջեից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման բացակայությամբ:

Եկամուտների կատարման մակարդակից ելնելով՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի՝ 2011թ. տարեկան բյուջեի ծախսերը: Այն կատարվել է 91.1%-ով: 432.1մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 393.8մլն. դրամի ծախս. թերակատարումը եղել է 38.3մլն. դրամ:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 98.9%-ով: Թերակատարումը կազմել է 4.1մլն. դրամ: Պլանային 388.9մլն. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 384.8մլն. դրամ: Վարչական բյուջեի 47.8% կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 80.4մլն. դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները / 20.9% /, սանիտարական մաքրման, փողոցային լուսավորության ցանցի շահագործման ծախսերը կազմել են 52.2մլն. դրամ կամ վարչական մասի 13.6%-ը:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2011թ-ի տարեկան բյուջեի ծախսերը այսպիսին են՝ կրթության ծախսեր՝ 100%, մշակութային՝ 99.5%, ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ՝ 97.9%, շրջակա միջավայրի պահպանություն կամ սանիտարական մաքրում՝ 99.7%, սոցիալական պաշտպանության ոլորտ՝ 99.9%:

Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդը, որն ամբողջությամբ ուղղվել է ֆոնդային մաս, կատարվել է 95.9%-ով՝ ապահովելով համայնքի՝ 2011թ-ի ֆոնդային բյուջեի կատարումը 61.7%-ով:

2010թ-ի համեմատությամբ 2011թ-ի վարչական բյուջեի ծախսերը գերազանցել են 21.0մլն. դրամը կամ 5.8%-ով:

Չամայնքի՝ 2011թ-ի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 61.7%-ով. 94.8մլն. պլանային դիմաց՝ 58.5մլն. դրամով: 2010թ-ի համեմատությամբ այս գծով ծախսերը թերակատարվել են 13.9մլն. դրամ, կամ պակասել են 13.2%-ով:

2011թ-ին ֆոնդային բյուջեից 33.4մլն. դրամ վճարվել է ասֆալտապատման, անձրևաջրատար ցանցի և փոսային հիմնանորոգման համար:

Փողոցային լուսավորության ծախսերը կազմել են 10.5մլն. դրամ:

Թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզի շենքի տանիքի կապիտալ նորոգման համար վճարվել է 12.1մլն. դրամ:

Չամայնքային բյուջեի հաշվին իրականացվել են նաև ընթացիկ այլ աշխատանքներ և ծրագրեր: Մասնավորապես՝ ջրընդունիչ դիտահորերի հիմնանորոգում՝ 1մլն.890 հազ. դրամ, ծառերի սանիտարական հատում՝ 4մլն. դրամ:

2011թ-ի հունվարի 1-ի դրությամբ բյուջետային պարտքը կազմում է 26.6մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2010թ-ին կուտակված պարտքերը մարվել են ամբողջությամբ:

2011թ-ի ընթացքում կուտակվել է 23.2մլն. դրամ պարտք, որից փողոցների փոսային հիմնանորոգման գծով՝ 20.3մլն. դրամ, լուսավորության ցանցի կառուցման գծով՝ 1.4 մլն. դրամ, թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզի շենքի տանիքի հիմնանորոգման գծով՝ 0.4 մլն. դրամ, նախագծային աշխատանքների՝ 1.1մլն. դրամ:

Նախորդ տարի ֆինանսատնտեսագիտական բաժնի աուդիտորական խմբի կողմից 11 ՅՈՒԿ-ում և համայնքի ղեկավարի աշխատակազմում կատարվել են ներքին աուդիտ: 2010թ. տարեկան հաշվետվությունների հիման վրա կազմված համապատասխան հաշվետվությունները և եզրակացությունները, գործող կարգի համաձայն, ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

2011թ-ին վերստուգիչ պալատի կողմից համայնքում իրականացվեցին պլանային հերթական ստուգումներ: Ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկանքն ուղարկվել է քաղաքապետարան: Քաղաքապետարանում այդ նպատակով ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից կատարվել են որոշակի աշխատանքներ, տրվել են համապատասխան պարզաբանումներ, որոշ աշխատանքներ էլ դեռևս ընթացքի մեջ են:

Այսպես՝ հաստատված ժամանակացույցի համաձայն՝ վերականգնվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ 2009-2011թթ. հողի և գույքահարկի մասերով համայնքի բյուջե մուտքագրվող գումարները: Վերականգնվել են տարբեր գործառնությունների գծով մի շարք գումարներ: Ինչ վերաբերում է անորակ և ծավալային թերություններով շինարարական աշխատանքներին, ապա կազմվել է ժամանակացույց դրանց վերականգնման համար:

Համայնքի զարգացման լուրջ հիմքերից է իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացի ճիշտ կազմակերպումը: Այս ոլորտում տարիների ընթացքում արձանագրվում են էական տեղաշարժեր, անընդհատ ճշտվում է հարկման բազան: Առկա բարդությունները կապված են նախկինում կուտակված պարտքերի, ֆիզիկական անձանց անվճարունակության հետ: Չնայած բարդություններին՝ նախորդ տարի կարողացանք հարկերի և տուրքերի հավաքագրման գծով իրականացնել համակարգված աշխատանք:

Այսպես՝ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար գույքահարկի տարեկան ճշտված 37մլն.400հազար դրամի դիմաց հավաքագրվել է 37մլն.735հազար դրամ, որը կազմում է 109%: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը կատարվել է 117.8%-ով, փոխադրամիջոցների գծով գույքահարկի վճարումը կատարվել է 77.2%-ով:

Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 6մլն.350հազար դրամի դիմաց հավաքագրվել է 5մլն.275հազար դրամ, որը կազմում է 83.1%: Քաղաքաշինության գծով հարկային պարտավորությունները կատարվել են 77.4%-ով:

Հարկերի և տուրքերի մասով 2011թ. տարեկան կատարողականը կազմել է 83.4%:

2011թ-ի ընթացքում աճուրդային կարգով օտարվել է 2683.62քմ մակերեսով հողատարածք, որից՝ 1565.29քմ-ը՝ բնակելի կառուցապատման, 1118.33քմ-ը՝ հասարակական կառուցապատման համար. համայնքային բյուջե է մուտքագրվել 2մլն. 308հազ. դրամ:

Ուղղակի վաճառքի կարգով օտարվել է 5194.63քմ հողատարածք, որի դիմաց համայնքային բյուջե է մուտքագրվել 4մլն.620 հազ. դրամ:

Շարունակվել է ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գործընթացը: Ընդունվել է համայնքի ղեկավարի 36 որոշում, որի համաձայն՝ օրինականացվել է բնակելի նշանակության 428.08քմ, ավտոտնակ՝ 1220.79քմ, հասարակական նշանակության՝ 204.98քմ տարածք: Համայնքային բյուջե է մատուցագրվել 3մլն. 783 հազ. դրամ:

«Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ից համայնքային բյուջե է մուտքագրվել 20մլն. 573 հազ. դրամ՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն համարվող հողերի վարձակալությունից:

2011թ-ին ընդունվել է հասցեի տրամադրման 268 որոշում, տրվել է 13 շինարարական թույլտվություն, ճարտարապետահատակագծային 33 առաջադրանք:

Կառուցապատման է տրամադրվել 1586.3քմ, որից հասարակական կառուցապատում՝ 741.3քմ, կանաչապատում՝ 845քմ: Այս գործառույթից մուտքերը կազմում են 4մլն.202հազ. դրամ:

Համայնքապահպանման ու համայնքաշինության համար լուրջ խթան են ծրագրերի ներդրումն ու իրականացումը: Տարիների ընթացքում իրականացված աշխատանքները և ունեցած փորձը ծրագրերի իրականացման ոլորտում ևս մեկ անգամ հավաստում են, որ ներկայումս անհրաժեշտություն է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Անցած տարի՝ փետրվարին, Երևանում անցկացվեց «Մասնակցային կառավարում» համաժողովը, որին հրավիրված էին նաև մեր համայնքի ներկայացուցիչները: Համաժողովի ընթացքում ամփոփվեց Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի կողմից իրականացված «Հաղորդակցության բարելավումը Հայաստանի համայնքներում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Սևան համայնքում իրականացվեց «Իրազեկված քաղաքացի, զարգացած համայնք» դրամաշնորհային փորձնական ծրագիրը, որի արդյունքները ևս ամփոփվեցին համաժողովի ընթացքում:

2011թ-ին շարունակվեցին Սևանա լճի ջրի մաքրության ապահովման նպատակով Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի վարկային միջոցներով մարզի քաղաքներում, այդ թվում՝ Սևանում կոյուղագծերի կառուցման աշխատանքները:

2011թ-ին համայնքում իրականացվեց «Պլաստիկ շշերի առանձնացումը կենցաղային աղբից» ծրագիրը, որը ֆինանսավորվել է ԱՄՆ ՄԶԳ և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից: Հանրապետության 3, այդ թվում Սևան համայնքում իրականացված այս ծրագրի գործընկերներն էին «Էկո ինջիներիզ» վերամշակման ընկերությունը, Ուրբան կայուն զարգացման հիմնադրամը, որի տեղական գործընկեր էին ընտրվել նաև «Սևան երիտասարդական ակումբ» ՀԿ, «STV-1» հեռուստաընկերությունը:

«Կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի կողմից իրականացվող տեխնիկական աշխատանքներին զուգահեռ իրականացվեց նաև իրազեկման եռամսյա ծրագիր, որի նպատակը աղբահանության և կենցաղային աղբից պլաստիկ շշերի առանձնացման մշակույթի ձևավորումն էր՝ մի շարք ակցիաների, բաց դասերի միջոցով:

Եվս մեկ ծրագրի մեկնարկ տրվեց 2011թ-ին: Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազմակերպության Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվում է «Քաղաքացիական հասարակություն և տեղական ինքնակառավարման աջակցություն» քառամսյա ծրագիրը: Համագործակցության համար ընտրվել են 43 համայնքներ, Գեղարքունիքի մարզում՝ 4-ը, այդ թվում՝ Սևան համայնքը: Ծրագրի նպատակն է համայնքային զարգացման ծրագրերի մշակման գործընթացում համախմբել

ինքնակառավարման մարմնի, քաղաքացիական հասարակության և բնակիչների ներուժը: Սևան համայնքի կողմից արդեն ներկայացրել է 1-ին հայտը, որը ֆոկլուս և ծրագրի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբերի կողմից ճանաչվել է առաջնահերթ: Արդեն մեկնարկել է «Լուսավորություն բակերին» ծրագիրը, որի շրջանակներում բազմաբնակարան շենքերի բակերում կշահագործվի գիշերային լուսավորության ցանցը: Ծրագրի արժեքը 11մլն. 687 հազ. դրամ է, որից 6.2մլն. դրամը տրամադրել է Քաունթերփարթ ինթերնեյշնլը:

Սևանի կենտրոնական փողոցն անցած տարի, համայնքային բյուջեի միջոցների հաշվին՝ 20մլն. դրամ, ունեցավ գիշերային լուսավորության ցանց:

Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Սևանում, կարևորագույն հիմնախնդիր է բազմաբնակարան շենքերի տանիքաշինությունը: Վերջին տարիների ընթացքում կառավարության կողմից և համայնքային ներդրումների շնորհիվ հնարավոր եղավ այս գործում արձանագրել առաջխաղացում:

Նախորդ տարի շարունակվեց տանիքաշինությունը, և հիմնանորոգված տանիքների ցանկը համալրվեց ևս 4-ով:

Ներկայացնեն մաս ներհամայնքային ընթացիկ աշխատանքները՝

Ասֆալտապատում և փոսային նորոգումներ, որի իրականացման համար համայնքային բյուջեից տրամադրվել է 29մլն. 500 հազ. դրամ, հանրային 2 լողափերի սանիտարական մաքրում և աղբահեռացում՝ 1մլն. դրամ, գերեզմանատներում սեղանների տեղադրում՝ 375հազ. դրամ, գերեզմանատան ցանկապատի տեղադրում՝ 1մլն. 475 հազ. դրամ:

Նախորդ տարի թիվ 4 «Գալիք» մանկապարտեզը ընդգրկվեց Հայաստանի սոցիալական ներդրումներ հիմնադրամի շահառուների ցանկում, որի արդյունքում այս տարի արդեն իրականացվում է «Գալիք» մանկապարտեզի հիմնանորոգում» մեծամասշտաբ ծրագիրը՝ 68մլն. դրամ արժողությամբ: Համայնքային ներդրումը ծրագրի իրականացման գործում 3մլն 400 հազար դրամ է:

2011թ-ի տարեվերջը նշանավորվեց Սևանի պոլիկլինիկայի հիմնանորոգման աշխատանքների ավարտով: Համայնքը ևս անմասն չմնաց այս ծրագրի իրականացմանը՝ ներդնելով 14.5մլն. դրամ:

Համայնքում գործող կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովման նպատակով ևս իրականացվում են մի շարք աշխատանքներ: Ընթացիկների կողքին առանձնանում է Յա. Ջարոբյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում նախորդ տարի մեկնարկած և այս տարի արդեն գործողության վերածված ծրագիրը, որի շրջանակներում, մեր կողմից նախապես ձեռքբերված պայմանավորվածության և համագործակցային աշխատանքների շնորհիվ, իտալահայ բարերար Կարեն Կոկչյանի

բարեգործական ձեռնարկի միջոցով և ֆինանսավորմամբ, համայնքի աջակցությամբ դպրոցում կառուցվում են 3 սանհանգույց և արարողությունների սրահ:

Համայնքի համար կենսական նշանակություն ունի կոմունալ տնտեսության բնականոն գործունեությունը: Այսօր համոզված կարելի է ասել, որ տարիների ընթացքում կարողացել ենք թե տնտեսապես, թե ֆինանսապես կայացած կառույց ունենալ: «Կոմունալ տնտեսություն» ԲԲԸ համալրված է անհրաժեշտ տեխնիկայով, իրականացվել են մի շարք ներդրումային ծրագրեր: Եղածին զուգահեռ ընկերության տեխնիկական պարկը համալրելու աշխատանքներ են իրականացվում:

2003թ-ից բնակարանային տնտեսության պահպանման առանցքը դարձան համատիրությունները: Ներկայումս համայնքում գործում է 4 համատիրություն, որոնք ընդգրկում են 193 բազմաբնակարան շենք: Համատիրությունների նախագահները իրենց գործունեության ընթացքում մշտական փոխհարաբերության մեջ են ՏԻՄ-ի հետ: Այս ոլորտում առկա են ֆինանսական, նյութական և տեխնիկական բազմաթիվ խնդիրներ. Մեր լիազորությունների և առկա հնարավորությունների շրջանակներում փորձում ենք լուծել այդ խնդիրները՝ սկսած տանիքներից մինչև նկուղներ, վերելակներից մինչև աստիճանահարթակներ:

4-րդ վթարայնության շենք ճանաչված Նալբանդյան 36 շենքի ամրացման աշխատանքների իրականացման նպատակով բազմիցս դիմել ենք կառավարություն, ներկայացրել ենք ստեղծված իրավիճակը: Արդյունքում՝ շենքի ամրացման նպատակով կառավարությունը հատկացրել է անհրաժեշտ գումար:

Վերելակների շահագործման, անխափան աշխատանքի նպատակով համագործակցում ենք «Եվրովերելակ» ՍՊԸ-ի հետ, որը մասնագիտացված կառույց է և ժամանակին իրականացնում է անհրաժեշտ գործառույթները:

Շենքերի վերանորոգման հետ կապված մեծ ծավալի աշխատանքներ համայնքային բյուջեի շրջանակներում հնարավոր չէ իրականացնել, սակայն հնարավորության սահմաններում ֆինանսական օգնություն է տրամադրվել և բնակիչներին, և համատիրություններին առաջնահերթ և անհետաձգելի աշխատանքների իրականացման համար:

Տարիների փորձը վկայում է, որ բնակիչները իրենց հոգս ու խնդիրների լուծման համար առաջին հերթին դիմում են քաղաքապետարան: 2011թ-ին քաղաքացիներից ստացված 2000 դիմումների շարքում զգալի թիվ են կազմում ֆինանսական աջակցություն բովանդակողները:

Սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների շարքում առանձնահատուկ կարևորություն ունեն երեքը՝ սոցիալական օգնության տրամադրում, բնակչության

գբաղվածության խնդրի լուծում և սոցիալական պայմանների բարելավում: Վերջին 2 խնդրի լուծման համար մեր մասնակցությունը սահմանափակ է ոչ միայն լիազորությունների, այլ նաև հնարավորությունների բացակայության պատճառով: Այս ոլորտում սոցիալական լարվածության մեղմացմանը ուղղված աշխատանքների զգալի մասը ներառում է օգնության տրամադրումը, որը 2011-ին կազմել է 17մլն 735 հազար դրամ: Համայնքի՝ Երևանում սովորող ուսանողների մի մասը օգտվում է Սևան-Երևան-Սևան երթուղով աշխատող ուսանողական ավտոբուսից:

«Սևան» բարեգործական հիմնադրամի միջոցով հանգանակած գումարով նախորդ տարի մեկական սենյակ Ս. Ջաքարյանի անվան մշակույթի պալատում և չգործող մշակույթի տանը վերանորոգվել են, որոնք ծառայում են տարեցների համար՝ որպես ժամանցի և հանգստի վայրեր: Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ Նաիրյան փողոցում մեծահասակների համար տաղավարի կառուցման ուղղությամբ:

Համայնքը տարիներ շարունակ համագործակցում է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ, որի արդյունքում սոցիալապես անապահով մարդիկ օգտվում են բարեգործական ճաշարանից: Նախորդ տարի «Առաքելություն Հայաստան»-ին հատկացվել է 1մլն. 500հազ. դրամ աշխատանքների կազմակերպման համար:

2011թ-ին 5 տասնյակից ավել նորածինների ծնողներ ստացել են անհրաժեշտ պարագաների և մանկական հագուստի փաթեթներ:

Մեր մշտական ուշադրության կենտրոնում են զոհված ազատամարտիկների ընտանիքները և այն անձինք, ովքեր մասնակցել են Արցախյան հերոսամարտին: Պարբերաբար նրանց հատկացվել են գումարներ սոցիալական վիճակի բարելավման համար, ինչպես նաև պարգևավճարներ:

Համայնքում գործող ուսումնական հաստատություններն էլ գտնվում են քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում. Նախորդ տարի ներդպրոցական խնդիրների լուծման նպատակով հատկացվել է 750հազ. դրամ:

Մշտական ուշադրության կենտրոնում են մտավորականները, համույթները, որոնց պարբերաբար հատկացվում են գումարներ իրենց գործունեությունը ծավալելու համար:

Քաղաքապետարան հասցեագրված դիմումները բազմաբնույթ են, որոնց որոշ մասի հասցեատերը քաղաքապետարանը չէ, սակայն այս դեպքում էլ համապատասխան միջնորդագրերի միջոցով փորձում ենք քաղաքացիներին ուղղորդել համապատասխան կառույցներ:

Նախորդ տարի իրավաբանական անձանց կողմից քաղաքապետարան է հասցեագրվել 566 գրություն, 308 գրություն է ստացվել նախարարություններից, մարզպետարանից, տեղական և միջազգային կազմակերպություններից, գերատեսչություններից:



Իրողությունն է այն փաստը, որ տեղական ինքնակառավարումն առանց ավագանու գործունեության չի կարող լինել լիարժեք: Համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու համատեղ ասշխատանքի արդյունքում ապահովվում է համայնքային կյանքի բնականոն ռիթմը:

2011-ին համայնքի ավագանին գումարել է 5 միստ, ընդունվել է 48 որոշում: Աշխատանքների կազմակերպման ընթացքում իմ կողմից կայացվել է 68 որոշում, \_\_\_\_\_ կարգադրություն, աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է 70 հրաման:

Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ 5 մասնկապարտեզների, Հովհ. Այվազովսկու անվան արվեստի և երաժշտական դպրոցների, Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի, Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգի, մասնկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, համայնքային մշակութային կենտրոնի լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատելը հնարավորություն է ընձեռել, որպեսզի նախադպրոցական կրթությունը, մարզամշակութային առօրյան, երեխաների արտադպրոցական աշխատանքների կազմակերպումն իրականացվեն համակարգված ու նպատակային:

Անցած տարի՝ Անկախության 20-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ, առաջին անգամ հնչեց Սևանի օրհներգը, որն հեղինակել են Վալերի Սարգսյանը և Հրաչ Բեգլարյանը:

2011-ի ընթացքում, ի թիվս մի շարք ներհամայնքային միջոցառումների, հանդիսությունների, տոնական երթերի, ակցիաների, մասնակցեցինք բազմաթիվ մարզային և հանրապետական միջոցառումների, մրցույթների:

ՏԻՄ-երի համակարգի ներդրման 15-ամյակի առթիվ Գյումրիում սեպտեմբեր ամսին անցկացվեց հանրապետական փառատոն, որին մասնակցեցին բոլոր համայնքները: Մեր համայնքը մրցութային կարգով ներկայացնող 2 մասնակիցն էլ տարբեր անվանակարգերում գրավեցին մրցանակային տեղեր՝ արժանանալով պատվոգրերի և պարգևավճարի:

Սևանի երաժշտական դպրոցը, որ արդեն 55 տարեկան է, համայնքի երաժշտական կյանքում ունի իր առանձնահատուկ տեղը: «Դպրոցի ծայնը» մարզային փառատոնում դպրոցը ներկայացավ մեծ պատասխանատվությամբ, ցույց տվեց փայլուն արդյունք՝ արժանանալով «Լավագույն դպրոց» կոչմանը: Դպրոցի երգչախումբը մասնակցեց երգչախմբերի՝ «Երգող Հայաստան» հանրապետական մրցույթին և գրավեց 3-րդ մրցանակային տեղը:

Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոցի թատերական խումբն անցած տարի գրանցեց իր հերթական հաջողությունը՝ մասնակցելով «Նռան հատիկ»

մանկապատանեկան հանրապետական մրցույթին և արժանանալով բարձր գնահատականի: Այս դպրոցի սաները Երևանում մասնակցեցին «Ստեղծագործում են մեր մանուկները» միջմարզային ցուցահանդեսին:

Կատարողական արվեստի համազգային ասոցիացիայի կողմից պարային համույթների 2-րդ բաց առաջնությանը մասնակցության հրավեր ստացած մշակութային կենտրոնի «Սևան» ժողովրդական պարերի համույթը առաջնությունում նվաճել է հաղթողի գավաթը՝ արժանանալով նաև «Լավագույն կատարողականության համար» անվանակարգին:

Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի սաները առաջին անգամ մասնակցեցին Համահայկական խաղերին: Հանրապետությունում ավանդույթ դարձած «Մարզական ընտանիք» մրցույթում, ինչպես միշտ, նախորդ տարի էլ համայնքի մարզական ընտանիքները ցուցաբերեցին բարձր արդյունքներ՝ գրավելով մրցանակային տեղեր:

Սևանցի մարզիկները 2011թ-ին իրենց մասնակցությունն ունեցան մի շարք մարզային, հանրապետական և միջազգային մրցելույթների՝ լավագույնս ներկայացնելով համայնքը:

Համայնքի նախակրթարանները աշխատում են ծանրաբեռնվածությամբ՝ իրականացնելով երեխաների նախադպրոցական կրթության, դաստիարակության, խնամքի, անվտանգ միջավայրի ապահովման գործառույթները: Փորձառու մանկավարժ-դաստիարակների աշխատանքի շնորհիվ մարզում և հանրապետությունում մեր մանկապարտեզներն ունեն իրենց տեղը: Անցած տարի էլ օրինակելի միջոցառումների, հանդեսների, ուսանելի բաց պարապմունքների ականատեսը եղանք:

Համայնքային կյանքը փոխելու, տնտեսական և սոցիալական զարգացման ռեալ հնարավորություններ ստեղծելու ճանապարհին աշխատանքները կառուցվում են՝ ելնելով ժողովրդավարական սկզբունքներից: Համատեղ ծրագրերի մշակման, համայնքային հիմնախնդիրները վերհանելու և լուծման ուղիներ փնտրելու նպատակով հաճախ են կազմակերպվում հանդիպումներ, հրավիրվում են տարբեր կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քիչ թիվ չեն կազմել այն ընդունելությունները, երբ գնահատվել են Սևանի կյանքում իրենց ներդրումն ունեցած անձինք: Նախորդ տարի էլ համայնքային կյանքում ունեցած ավանդի, հասարակական ակտիվ գործունեության համար մի շարք անձինք և կազմակերպություններ արժանացել են պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Յուրաքանչյուր չորեքշաբթի կազմակերպվող ընդունելությունների ընթացքում էլ քաղաքացիները դիմում են իրենց հուզող հարցերի, խնդիրների լուծման համար:

Սևանը ներհամայնքային ծրագրերին, աշխատանքներին զուգընթաց գրանցում է նաև գործնական-ընկերային ապակենտրոնացված հարաբերություններ: Նախորդ տարի Սևան-

Գրենորբլ 7-ամյա համագործակցությունը համալրվեց նոր ծրագրերով, որոնց կանդրադառնամ՝ ըստ համագործակցային ուղղությունների:

Առողջապահության բնագավառում իրականացվող հերթական ծրագրերի հասցեատերը կրկին «Սևանի հիվանդանոց» ՊՓԲԸ-ն էր, որտեղ շարունակվեցին հիմնանորոգման աշխատանքները, այս անգամ՝ վիրահատական բաժանմունքում: Այն իրականացվեց «Ֆրանսիական բժշկական օգնություն և զարգացում» կազմակերպության կողմից:

Զբոսաշրջության բնագավառում 2011-ին շարունակվեցին արդեն իրականացվող ծրագրերը և ավելացան նորերը:

Ի թիվս մի շարք ձեռնարկների, ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ «ԿԱԶԱ» շվեյցարական կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից շարունակվեցին զբոսաշրջության գործի բարելավման նպատակով ինտերնետային կայքէջի ստեղծման վերապատրաստման դասընթացները, որոնց մասնակցեցին նաև մեր մասնագետները: Կայքէջն ընդգրկում է Սևան, Վարդենիս, Գորիս քաղաքները և Գեղարքունիքի մարզը: Այն եռալեզու է, անընդհատ թարմացվելու է՝ ընդգրկելով նոր տեղեկատվություն նշված տարածաշրջանների վերաբերյալ, և այս տարի գործարկվելու է:

Նախորդ տարի զբոսաշրջության գործում միջհամագործակցությունն ընդգրկեց հյուրընկալող ընտանիքների ցանցի զարգացումը, շրջանցիկ երթուղու ստեղծումը Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում:

Մշակվել է նաև «Գեղարքունիքի մարզ, երթուղի դեպի Գորիս» զբոսաշրջային բրոշյուրի վերջնական տարբերակը: Բրոշյուրում ընդգրկված են մարզի քաղաքներ այցելողների համար հետաքրքրություն ներկայացնող և անհրաժեշտ տեղեկատվություն:

Ֆրանսախոսության տարածման գործում արդեն երրորդ տարին գործում է ֆրանսախոսության ուսուցման ծրագիրը, որն անցկացվում է Սևանում ամռան ամիսներին: Դասընթացների ունկնդիրներն են աշակերտներն ու ուսանողները, երիտասարդ մասնագետները: Այն իրականացվում է Գրենորբլի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ՝ «Ֆրանս-ֆորմասիոն ինտերնասիոնալ» կազմակերպության դասընթացավարների միջոցով: Համայնքը ևս ունի իր ներդրումը ծրագրի իրականացման գործում: 2011թ-ին ունեցանք առաջին շրջանավարտները, որոնք ֆրանսերենի բավարար գիտելիքներ են ձեռք բերել:

Սևանի թիվ 1 դպրոցում 2011-2012 ուսումնական տարվանից՝ որպես երրորդ օտար լեզու, դասավանդվում է ֆրանսերեն:

Նախորդ տարին առանձնացավ նաև Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումների անցկացմամբ, որին իրենց մասնակցությունը բերեցին համայնքի մշակութային, երաժշտական, ստեղծագործական օջախները:

Գրենոբլի քաղաքապետարանի կողմից իրողություն դարձավ ևս մեկ ծրագիր՝ «Էլեկտրականություն և նորացվող էլեկտրահամակարգերի տեխնիկական կենտրոնի ստեղծում»: Համաձայն ծրագրի առաջին փուլի՝ 5 մասնագետներ նախորդ վերապատրաստվել են Գրենոբլում, որին հաջորդել է արհեստագործական ուսումնարանում ֆրանսիական կողմից տրամադրված սարքավորումների ստացումը: Ուսումնարանում կիրականցվի նաև ուսումնական գործընթացն այս ծրագրի շրջանակներում: Համաձայն այդ ծրագրի՝ Սևանի պետական քոլեջում էլ կստեղծվի տեղեկատվական կենտրոն: Համայնքն արդեն հատկացրել է 400հազ. դրամ արհեստագործական ուսումնարանում տեխնիկական խնդիրների լուծման համար:

Հայ-ֆրանսիական, մասնավորապես Սևան-Գրենոբլ համագործակցությունը տարիների կենսագրություն ունի ու ներկայանում է բազմաթիվ ծրագրերի տեսքով, որոնց նպատակն է սերտ փոխհամագործակցության հաստատումը, փորձի փոխանակումը, զբոսաշրջության զարգացման միջոցով տնտեսական գործունեության բազմազանության ապահովումը, ենթակառուցվածքների զարգացումը, մշակութային կյանքի ակտիվացումը, ֆրանսախոսությանը տարածումը, բուժհամակարգի կառավարման բարելավումն ու անձնակազմի վերապատրաստումը:

Քաղաքների զարգացման ռազմավարությամբ պայմանավորված՝ 2011թ-ին շարունակվեց մեր համագործակցությունը Լեհաստանի Բրոդնիցա քաղաքի հետ: 2 քաղաքների միջև ապակենտրոնացված հարաբերությունների վավերացման համաձայնագիրը ընդգրկում է նաև «Երիտասարդների փոխանակում» ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում 2011թ-ի ամռանը սևանցի պատանիներն ու երիտասարդները ճանաչողական, մշակութային այցով գտնվում էին Բրոդնիցայում, որին հաջորդեց լեհ երիտասարդների այցը Սևան սեպտեմբեր ամսին:

Ծրագիրը կրում է շարունակական բնույթ, և այս տարի էլ կան համապատասխան պայմանավորվածություններ Համաձայնագրերի տեսքով:

Ապակենտրոնացված հարաբերությունների շրջանակներում 2011թ-ի մայիսին հայաստանյան պատվիրակության կազմում մասնակցեցի Բելառուսի Հանրապետության Օսիպովիչ շրջան կատարած այցին: Այս շրջանի ղեկավարության հետ արդեն կան նախնական պայմանավորվածություններ, որոնք առաջիկայում կդառնան առավել տեսանելի:

Երկու՝ հայ և ուկրաինացի ժողովուրդների բարեկամության, միմյանց առավել լավ ճանաչելու մի քայլ էր Հայաստանի հանարպետությունում Ուկրաինայի դեսպանի այցը Սևան:

2011թ-ին՝ հոկտեմբերի 12-21-ը, հանրապետությունում անցկացվեց մարդահամար, որն բավականին լավ էր կազմակերպված: Կարողացանք անհրաժեշտ տեղեկատվությամբ աջակցել գործընթացի բնականոնությանը:

Տեղական իշխանությունները ձգտում են աշխատել թափանցիկ և հրապարակային, որի վկայությունն են տեղական հեռուստաընկերության եթերի, տեղական, մարզային և հանրապետական թերթերի և ամսագրերի միջոցով հանդես գալը, անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը, համագործակցությունը շահագրգիռ անձանց և կազմակերպությունների հետ՝ աշխատանքների լուսաբանման, համայնքային կյանքի ներկայացման, հետադարձ կապի ապահովման նպատակով:

Թափանցիկ աշխատառճի ձևավորման ճանապարհին իրականացվող ծրագրերի մեջ առանձնանում են քաղաքապետարանում գործող «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը, որն առավել ամբողջական և համակարգված է դարձնում իրականացվող աշխատանքները:

Աշխատանքների առավել արդյունավետության նպատակով, մասնագիտական որակավորման և հմտությունների ապահովման համար աշխատակազմի համայնքային ծառայողները նախորդ տարի անցել են վերապատրաստման դասընթացներ և հունիս, հոկտեմբեր ամիսներին հանձնել ատեստացիա:

Համայնքում գործող մի շարք կազմակերպություններ՝ էներգամատակարարման, ջրմուղ-կոյուղու, գազամատակարարման, ջրամատակարարման, տրանսպորտային, համայնքային ենթակառուցվածքներ չեն, և աշխատանքները կազմակերպելիս տեղական իշխանությունները առաջնորդվում են՝ ելնելով իրենց լիազորությունների շրջանակներից: Գործնական միջնորդությունների միջոցով փորձում ենք լուծել համայնքին առնչվող յուրաքանչյուր խնդիր:

Բավականին ակտիվ է կապը համայնքում գործող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ: Կարևորելով քաղաքացիական հասարակության դերը՝ մեր գործունեությունը կառուցում ենք գործնական - ընկերային հարթության վրա, որը բավականին արդյունավետ է նաև համայնքում այդ կազմակերպությունների կողմից համայնքային կարիքների բացահայտման, առաջնահերթությունների որոշման և զարգացման ծրագրերի ներդրման համար:

Պարբերաբար կազմակերպվող ընդունելություններին ներկա են լինում հասարակական տարբեր խմբերի ներկայացուցիչներ՝ աշակերտներ, երիտասարդներ, կանայք: Նրանց միջոցով կարողանում ենք իրականացնել մի շարք ծրագրեր, ընթացիկ աշխատանքներ:

2011թ-ը աշխատատար էր ու հազեցած, կարողացանք համայնքային բյուջեի հնարավորությունների սահմաններում, համագործակցային ծրագրերի միջոցով

ապահովել համայնքապահպան գործունեություն: Հայաստանում բոլոր համայնքներն էլ ունեն նույն խնդիրներն՝ սկսած սպասարկման ծառայություններից մինչև կենցաղային հիմնահարցեր, տանիքներ, ներքին ցանց, գիշերային լուսավորություն, ասֆալտապատում: Այս ամենին ավելացնեն նաև աշխատատեղերի բացակայությունն ու գործազրկությունը, որոնք իրենց բացասական ազդեցություն են թողնում ներհամայնքային կյանքի վրա:

Հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները, ֆինանսական հնարավորությունները՝ կարողացանք 2011թ-ին էլ աշխատել՝ ապահովելով բնականոն ընթացք:

Տեղական իշխանությունների աշխատանքի տեսանելիությունն ու արդյունավետությունը պայմանավորված է նաև համայնքի յուրաքանչյուր բնակչի վերաբերմունքով, աջակցությամբ, գործուն միջամտությամբ, մասնակցությամբ համայնքային կյանքին:

Լավ գիտեն, որ չնայած իրականացված ծրագրերին ու ընթացիկ գործերին, քիչ չեն հիմնախնդիրները, սակայն հավատացած են, որ համայնք-բնակիչ համագործակցության և երկուստեք պատասխանատվության շնորհիվ հնարավոր կլինի գրանցել առավել լավ արդյունքներ, ունենալ զարգացած և ներկայանալի համայնք:

10.02.2012թ.